**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ**
**ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ., շ.1, Հեռ.
(098)048046, tumanyan.lori@mta.gov.am

N 492
*08 օգոստոս 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ՀՐԱՆՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Մարգարյան

Ձեզ ենք ներկայացնում Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 86-Ա -90-Ա որոշումները:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան*
*098 048 046*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 86-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով և հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1377527 վկայականը և քաղ.-ուհի Մարիետա Սերգեյի Քառյանի դիմումը՝
որոշում եմ.

1.Հանգուցյալ՝ Գեղեցիկ Մինասի Մեջինյանի սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ գ.Աթան բնակելի տանը (ծածկագիր՝ 06-011-017-000015-001) մակերեսը՝ 118,7 քմ, 0,197 հա տնամերձ հողամասին (ծածկագիր՝ 06-011-017-000015), կիսակառույցին (ծածկագիր՝ 06-011-017-000015-002) մակերեսը՝ 285,6 քմ, սանհանգույցին (ծածկագիր՝ 06-011-017-000015-003) մակերեսը՝ 4,0 քմ և գոմին(ծածկագիր՝ 06-011-017-000015-004) մակերեսը՝ 26,0 քմ տրամադրել նոր <<ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք,գ.Աթան, 3-րդ փողոց 1-ին նրբանցք, տուն 3/2 >> հասցեն :

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք

ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 87-Ա

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի <<ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 87-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-045-0045-0014 ԾԱԾԿԱԳՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.06344 ՀԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱՔԱՆԴ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՆԴՄԱՆ,ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆ>> ԱՃՈՒՐԴԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով քաղաքացի Տիգրան Զավենի Էվոյանի դիմումը՝ որոշում եմ.

1.Բավարարել Տիգրան Էվոյանի դիմումը և դադարեցնել Թումանյան համայնք, գ.Լորուտ,1-ին փողոց,թիվ 4 հասցեում գտնվող կիսակառույց շինության շինարարության քանդման աշխատանքները:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2018թ. հունիսի 6-ի <<Շինարարության քանդման թույլտվություն տալու մասին>> թիվ 69-Ա որոշումը և Թումանյանի համայնքապետարանի 2018թ. մայիսի 21-ի <<Համայնքային սեփականություն հանդիսացող 06-045-0045-0014 ծածկագրի բնակավայրերի նշանակության 0,09344 հա հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողատեսքի վրա կառուցված կիսաքանդ շինության քանդման, շինության տիրապետման և հեռացման>> աճուրդը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 88-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԸ <<ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2018թ. հուլիսի 4-ի N 32-Ա որոշումը՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող՝ Թումանյան համայնք ք. Թումանյան 2-րդ փողոց 5 հասցեում գտնվող շենքը(վկայական՝ 06062014-06-0030) և նրա կառուցման ու սպասարկման համար նախատեսված 0,0888 հա հողամասը 25 /քսանհինգ/ տարի ժամկետով տրամադրել անհատույց օգտագործման<<Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-ին նախադպրոցական ուսումնական գործունեություն իրականացնելու նպատակով:
2.Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Է.Վարդանյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետից բխող գործառույթների իրականացումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**
07 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 89-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ (ՏԵՂԱՏԱՐԱՓ ԱՆՁՐԵՎ,ԲԱՐՁՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ) ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՄԵՂՎԱԲՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝
որոշում եմ.

1.Թումանյան համայնքի բնակավայրերում 2018թ.օգոստոսի 8-14-ը արձանագրել մեղվաբնտանիքներին պատճառված վնասները:
2.Մեղվաբնտանիքներին պատճառված վնասները արձանագրելու աշխատանքները Թումանյան համայնքի բնակավայրերում կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել հանձնաժողովներ հետևյալ կազմով.
1/ք.Թումանյան
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մոսինյան
-------//------- անդամներ՝ Մ.Խեչոյան
-------//------- Է.Վարդանյան
-------//------- անասնաբույժ՝Մ.Կիրակոսյան
2/գ.Աթան
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Քառյան
-------//------- անդամներ՝ Ն.Քառյան
-------//------- անասնաբույժ՝ Մ. Սարգսյան
3/գ.Ահնիձոր
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մաթևոսյան
-------//------- անդամներ՝ Մ.Հովսեփյան
-------//------- Հ.Սարգսյան
-------//------- անասնաբույժ՝ Գ. Քառյան
4/գ.Լորուտ
Հանձնաժողովի նախագահ՝ Գ.Սարգսյան
-------//------- անդամներ՝ Ա.Ստեփանյան
-------//------- Ս.Այդինյան
-------//------- Գ.Մելիքսեթյան

-------//------- անասնաբույժ՝ Լ.Այդինյան

5/գ.Մարց

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Գալստյան

-------//------- անդամներ՝ Ս.Վարդանյան

-------//------- Գ.Գալստյան

-------//------- անասնաբույժ՝Ս.Գալստյան

6/գ.Շամուտ

Հանձնաժողովի նախագահ՝ Բ.Վանյան

-------//------- անդամներ՝ Ա.Վանեսյան

-------//------- Ս.Վանյան

-------//------- անասնաբույժ՝ Մ. Սարգսյան

7/գ.Քարինջ

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Մկրտումյան

-------//------- անդամներ՝ Գ.Գալստյան

-------//------- Տ.Մխիթարյան

-------//------- անասնաբույժ՝Ս.Գալստյան

3.Ա.Մոսինյանին՝Թումանյան համայնքի բոլոր բնակավայրերի մեղվաընտանիքներին պատճառված վնասների արձանագրության արդյունքները մինչև 2018թ.օգոստոսի 15-ը ներկայացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության բնապահպանության վարչության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ՋԱՎԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 90-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով և 10-րդ հոդվածի 3-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 1-ի հոդվածի 2-րդ կետով, 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 30.07.2018 թվականի թիվ 01/17.2/5499-18 հանձնարարականի պահանջները և ՀՀ Լոռու մարզպետի 2018 թվականի հուլիսի 31-ի թիվ 101/107.3.1/4681-18 գրությունը՝
որոշում եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը՝ համաձայն թիվ 1,2,3,5,6,7,8,9, 10,11,12,13,14,15,16 և 17 հավելվածների:

2.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2016թ. մարտի 21-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 4-Ա որոշման N 1,2,3,4,5,7,9,10,12,13,14,15,16 և 17 հավելվածները,Թումանյան համայնքի ղեկավարի 2017թ. հոկտեմբերի 12-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» թիվ 111-Ա որոշման N 1 հավելվածը,Թումանյան համայնքի ղեկավարի 2018թ. ապրիլի 5-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելու մասին» թիվ 56-Ա որոշման N 1,2 հավելվածները և Թումանյան համայնքի ղեկավարի 2018թ. ապրիլի 11-ի «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» թիվ 58-Ա որոշման N 1 հավելվածը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ